



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ և ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 17 » հուլիսի 2023թ. 98-ձ ք. Երևան

«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ և ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՀՀ կառավարության 2018թ. մարտի 15-ի №272-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» № 1148 առ 06.07.2023թ. կառավարության որոշումը և ՀՀ էկոնոմիկայի նախարարության Մ/27226-2023 (մուտքագրված №1778 առ 13.07.2023թ.) գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ընկերության Ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների պատասխանատու անձ նշանակել ընկերության Քարտուղարության պետ Ռուզաննա Սարյանին :
2. Քարտուղարության պետ Ռուզաննա Սարյանին՝
 - ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների գործընթացն իրականացնել համաձայն ՀՀ կառավարության 2018թ. մարտի 15-ի №272-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» № 1148 առ 06.07.2023թ. կառավարության որոշման Հավելված 1, Հավելված 2 և Հավելված 3-ի դրույթների,
 - ապահովել Պատասխանատու անձի անունը, ազգանունը, պաշտոնը, իր հետ կապի միջոցների (փոստային հասցե, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե) վերաբերյալ տվյալների տեղադրումը Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքէջում,
3. Սույն հրամանը ուժի մեջ և մտնում ստորագրման պահից:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՏՆՕՐԵՆ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ